մարդէ մը չիդար՝ ո՞վ կը հաւատար իր տոնմին վրայ այսպիսի չարագուշակ լուրի մը...։

Ըսենք ապա վերջապէս ու կարեկցապէս՝ թէ մեր մէջ այս մեղքին գլխաւոր աղբիւրն է կոյր տենչ մը նիւթական մեծութեանց. ամէն ոք մեծ մասամբ՝ մինչև երբեմն յետին գեղջուկը՝ կուզէ ըլլալ քաղաքացի ու հրամանատան. ո՛չ ոք գիւղացի բայց միայն բժշկին խորհուրդով, ան ալ՝ ամիս մը երկու ամիս միայն, և անգամ մը բանը բանէն անցնելէն ետք. ամէն ոք ըլլալ կուզէ հարուստ քսակով, ո՛չ ոք սիրտով և մարմինով, ամէն ոք պատրիկ ու մագիստրոս, ամէն ոք գրագէտ, ոչ ոք արհեստագէտ ճիշդ և գրագէտ ու բանասէր խոնարհ. չա՛տ ոք Աստղիկի սիրեցեալ ու Կրեսոսի փեսայ և չա՛տ ու չա՛տ ոքուհի Ապոլոնի հարս դիցուհի։ Եւ այս մեկալումանիէն բռնուածներուն մեծ մասը՝ կը սոնքայ կը ճեմէ կը ճախրէ անխիղճ դուրսե՛ր իրեն արժան այն յատուկ փակարանէն, ուր կարծեօք խե՛ղճ արտուղիները դատապարտուած են չարչարուելու անլուր անբողոք... և սակայն ճշմարի՛տ պարկե՛շտ մեծութիւնը վաճառականութիւնն և ազնի՛ւ յառաջդիմութիւնն այնպէս կը համեմատին այս կարգի մեծամոլութեանց հետ, որպէս Արևելք Արևմուտքին, կայծակը կայծին, հոգին ուռուցիկ շոգիին հետ։

և ճգունս յանձին առնուցուս, և սպանանիցես։ Այլ ո՞, ասէ, ողորմիցի Յովչի օձահարի։ Պարտ էր գիտակցդ անազորոյն բռնութեանն փախչել ի ծառայութենէն, և այրել զդժնդակ ցանկութիւնն։ Եւ զի՞րդ, ասէ, իցէ այնմ հնար։ Երէ այդ սեր ընդ սիրոյն մուծանիցես, զերկնիցըն։ Որ արքայութեան ցանկայ, արհամարհեսցէ զազահութիւն։ Որ եղև ծառայ Քրիստոսի, մի՛ լիցի ծառայ մամոնայի, այլ և տէր ևս։ Քանզի փախստականին ի նմանէ զհետ ստէպ զալ սովոր է, և որ զնմանէ կամիցի լինիցի՝ փախչիլ։ Ոչ այնպէս զոք պատուէ՝ որպէս զարհամարիչս իւր, և ո՛չ զոք այնպէս այպանէ՝ որպէս զնորին ցանկացողն, ո՛չ միայն ծաղր կացուցանէ, այլ և ընդ բազում կապանօք հարստէ։ (Մեկն. Մատթ. Գիրք Ա. ճառ Թ. էջք 136/7)։